



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ալավերդու Օրհուս կենտրոն 2014թ.
/Հունվար – Դեկտեմբեր ամիսներ/



Ալավերդի 2014 թ.

2014 թվականին Ալավերդու Օրհուս կենտրոնը շարունակել է իր առաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Կենտրոնը հարթակ է հանդիսանում քննարկումների, աշխատանքային հանդիպումների, քաղաքացիական նախաձեռնությունների, էկոլոգիական կրթության, բնապահպանության քաղաքականության մշակման գործում խթան է հանդիսանում եւ կապող օղակ՝ հասարակություն-SԻՍ ուղղությամբ, հենվելով համայնքային հիմնախնդիրների վրա՝ նպատակ է շրջակա միջավայրի պահպանության և համայնքների կայուն զարգացմանը:

2014-ին Ալավերդու Օրհուս կենտրոնը իր գործունեությունն սկսել է հունվար ամսից ըստ հաստատված տեխնիկական առաջադրանքի, որը ներկայացվել է «Բլեջան» ՀԿ –ի կողմից: <Բլեջան> ՀԿ-ն իրականացնում է ՀՀ Օրհուս կենտրոնների ծրագիրը՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրված պայմանագրով:

Հաշվետու ժամանակահատվածում Ալավերդու Օրհուս կենտրոնը ընդհանուր ամսամաք իրականացրել է/կազմակերպել, մասնակցել, համագործակցել/ թվով 60 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 18 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ 10, էկոկրթությանն ուղղված 7 միջոցառում, նախաձեռնել են 4 հասարակական քննարկում, մասնակցել եւ աջակցել է 2 հասարակական լաման: Քննարկվող հարցերի կամ նախագծերի մասին տարածել հնարավոր ձեռքբերված տեղեկատվությունը:

/Կից ֆայլով կարող եք տեսնել Օրհուս կենտրոնների վիճակագրական հաշվետվությունն ավելի մանրամասն/:




- Կազմակերպվել և անցկացվել է իրազեկման սեմինար-քննարկումներ շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ
- Հասարակության մասնակցության խթանման նպատակով իրականացվել են հասարակական քննարկումներ, բնապահպանական հանձնաժողովի նիստեր՝ Ալավերդի եւ հարակից՝ Օձուն, Հազվի, Աբորի, Հաղպատ համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաների հետ կապված ծրագրերի վերաբերյալ: Անցկացվել են քննարկումներ եւ աշխատանքային հանդիպումներ «Քաղաքացիական կանաչ հիմնադրամի» ստեղծման վերաբերյալ:

- Ալավերդու ՕԿ-ը նախաձեռնել է աջակցել է էկոկրթական միջոցառումներին կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրհուսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ, կենսաբազմազանություն, կենսաբազմազանությունը որպես գյուղական համայնքների զարգացման գրավական, բնության հուշարձաններ, անտառների պահպանություն, էկոտուրիզմի, հանքարդյունաբերության, ջրային ռեսուրսների թեմաներով:
- Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղական հեռուստաընկերություն, հանրապետական ՋԼՄ-ների լուսաբանման միջոցով աջակցել է առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործվել են նաև www.aarhus.am կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի հնարավորությունները):
- ՏԻՄ և մարզային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց, ուսանողների, մանկավարժների մասնակցությամբ կազմակերպվել են Օրհուսի կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ իրազեկման եւ լուսաբանման միջոցառումներ:
- Օրհուս կենտրոնների հետ համատեղ մամուլի ասուլիս չի կազմակերպվել, սակայն կենտրոնները միաժամանակյա համաձայնեցված աշխատանք են տարել Սևանից հավելյալ ջրբացթողումների մասին օրենսդրական նախաձեռնության շուրջ և տեղերում առանձին հանդիպում քննարկումներ եւ իրազեկում է եղել տվյալ խնդրի վերաբերյալ, անցկացվել է ստորագրահավաք:
- Օկ-ը հարթակ է ծառայել բնապահպանական թեմաներով խորհրդակցությունների, աշխատանքային հանդիպումների, բանակցությունների և դասընթացների կազմակերպման և անցկացման համար:
- Մասնավորապես՝ Ալավերդու տարածքում գտնվող մկնդեղի թափոնակուտակիչի անվտանգության ապահովման եւ վտանգավոր ռիսկերի բացահայտման համար կազմակերպվել են քննարկումներ՝ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ներկայացուցիչների, Լոռու մարզպետի, մասնավոր սեկտորի, հկ-ներ եւ այլոց մասնակցությամբ: ԵԱՀԿ-ի կողմից հրավիրվել են անկախ փորձագետներ խնդրի ուսումնասիրության եւ վերջնական եզրահանգման համար, ինչի արդյունքում առկա է փաստաթուղթ: Աշխատանք է տարվել առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածման, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակների ներկայացման ուղղությամբ:
- Ակտիվ համագործակցություն կա տեղական, մարզային, հանրապետության այլ Հկ-ների, միջազգային կազմակերպությունների հետ :
- ՕԿ-ը դիմել է մասնավորապես Vallex ընկերությանը՝ բնապահպանական տեղեկատվություն ստանալու համար եւ կարևոր բնապահպանական հարցերի շուրջ ստացած տեղեկատվությունը տարածել այդ տեղեկատվությունն ինչպես կայքի, այնպես էլ քննարկումների ժամանակ:

Ալավերդու ՕԿ-ի համակարգողը Է Վրաստանում մասնակցել է դասընթացի՝ ԵԱՀԿ CASE միջազգային ծրագրին, «Աղետների ռիսկերի գնահատում» թեմայով, ինչպես նաև Հայաստանում՝ ԱՌՆ ռազմավարության իրականացումը Հայաստանում եւ ՏՄԴԿ թեմաներով:

- Ներկայացվել են եռամսյակային եւ կիսամսյակային հաշվետվություններ փորձագետների խորհրդին եւ ծրագրի ղեկավարին:



Ալավերդու Օրինա կենտրոնի համակարգող
Անուշ Էվոյան